ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.01.2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/193

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «ՎԱՆԴ-ԳԱՍՍ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Օհանյանի (լիազորագիր, տրված՝ 16.12.2019թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 02.12.2019թ. թիվ 26/26-1/19965-2019 գրությամբ «ՎԱՆԴ-ԳԱՍՍ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 27.11.2019թ. թիվ Ե/01/485-19 գրության հիման վրա, 02.12.2019թ. թիվ 26/26-1/19965-2019 գրությամբ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում նախաձեռնել է «Վանդ-ԳԱՍՍ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝

Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

«Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ. N 600-Ն հրամանի 4.3 կետի համաձայն՝ ՍՑ-ԼՕ-2019/236 ընթացակարգի քննությունը սկսվել է սկզբից:

2. «ՎԱՆԴ-ԳԱՍՍ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Վանդ-ԳԱՍՍ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

Ընթացակարգը նախաձեռնելու համար Պատվիրատուի բերված հիմքերի համաձայն՝ Պատվիրատուի կողմից հրապարակված «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/103/104» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) շրջանակներում 2-րդ չափաբաժնի մասով «Վանդ-ԳԱՍՍ» ՍՊԸ-ից պահանջվել են որակավորման փաստաթղթեր: Որակավորման փաստաթղթերը գնահատելիս «Մասնագիտական փորձառություն» չափանիշի մասով ներկայացված պայմանագրերը տվյալ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են հրավերով սահմանված պահանջներին ոչ համապատասխան, և «ՎԱՆԴ-ԳԱՍՍ» ՍՊԸ-ին տրվել է 3 աշխատանքային օր անհամապատասխանությունը շտկելու համար: Սահմանված ժամկետում ներկայացվել են նոր փաստաթղթեր, որոնք ևս չեն բավարարել հրավերով սահմանված պահանջներին:

Ուսումնասիրելով ընթացակարգը նախաձեռնելու համար Պատվիրատուի ներկայացրած գրավոր հիմքերը Ընկերությունը հայտնել է, որ առարկում է դրանց դեմ.

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը 2019 թվականի հոկտեմբերի 1-ին հրապարակել է «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/103/104» ծածկագրով գնման ընթացակարգը, որի հայտերի բացումը տեղի է ունեցել 2019 թվականի հոկտեմբերի 8-ին: Ընթացակարգը բաղկացած է եղել երկու չափաբաժնից:

«Վանդ-ԳԱՍՍ» ՍՊԸ-ն մասնակցել է «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/103/104» ծածկագրով գնման ընթացակարգին և 2-րդ չափաբաժնի համար ներկայացրել է հայտ, որի գնային

առաջարկը կազմել է 13 300 000 (տասներեք միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2.5 կետի 1-ին ենթակետի ա. պարբերությամբ սահմանված է 2-րդ չափաբաժնի մասով «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը գնահատելու համար նախկինում կատարված պայմանագրերը նմանատիպ համարելու չափանիշը: Մասնավորապես, սահմանված է, որ. «Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում. Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում՝ հիդրոտեխնիկական (նվազագույնը՝ 80%), (...) լիցենզիաների ներքո աշխատանքների կատարված լինելը (...)»:

Քանի որ «Բայազ Էներգոշին» ՍՊԸ-ի Ընթացակարգին մասնակցելու հայտը մերժվել էր, Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը տրամադրելու պահանջ էր ներկայացվել Ընկերությանը: Ընկերությունը սահմանված ժամկետում՝ 2019 թվականի նոյեմբերի 4-ին, փաստաթղթերը ներկայացրել է Պատվիրատուին, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին՝ i. osipyan@atdf.am, ուղարկելու միջոցով:

Ընկերության կողմից 2019 թվականի նոյեմբերի 4-ին Պատվիրատուին ուղարկված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում նաև ներառված էր Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2.5 կետի 1-ին ենթակետի ա. պարբերությամբ սահմանված 2-րդ չափաբաժնի մասով «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը գնահատելու համար նախկինում Ընկերության կատարված պայմանագրերը: Մասնավորապես, «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի առկայությունը հիմնավորելու համար Ընկերությունը ներկայացրել էր նախկինում կատարված հիդրոտեխնիկական աշխատանքների պայմանագրեր.

1) 2017 թվականի ապրիլի 05-ին կնքված թիվ 05/04 խորքային հորի հորատման աշխատանքների կատարման կապալային պայմանագիրը, որի գինը կազմել է 16 869 999 (տասնվեց միլիոն ութ հարյուր վաթսունինը հազար ինը հարյուր իննսունինը) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրին կից նաև Ընկերությունը ներկայացրել է տվյալ պայմանագրի կատարողական ակտերը և հարկային հաշիվները:

2) 2015 սեպտեմբերի 01-ին կնքված թիվ 02 խորքային հորի հորատման աշխատանքների կատարման կապալային պայմանագիրը, որի շրջանակներում Ընկերությունը մինչև 2018 թվականի դեկտեմբեր 04-ն կատարել է խորքային հորի հորատման աշխատանքներ: Պայմանագրի գինը կազմել է 21 855 600 (քսանմեկ միլիոն ութ հարյուր հիսունհինգ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրին կից Ընկերությունը նաև ներկայացրել է տվյալ պայմանագրի հարկային հաշիվները և պայմանագրով պատվիրատուի կողմից տրված տեղեկանք այն մասին, որ «Վանդ-ԳԱՍՍ» ՍՊԸ-ն տվյալ պայմանագրով կատարման ենթակա աշխատանքները կատարել է պատշաճ և ժամանակին:

2019 թվականի նոյեմբերի 06-ին ուղարկված՝ 2019 թվականի նոյեմբերի 05-ի ծանուցմամբ (այսուհետ նաև՝ Ծանուցում) Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի գնումների համակարգողը Ընկերությանը հայտնել է, որ որակավորումը հիմնավորող Ընկերության ներկայացրած փաստաթղթերում առկա է անհամապատասխանություն Ընթացակարգի հրավերի պահանջների նկատմամբ: Ծանուցմամբ Պատվիրատուի գնումների համակարգողը Ընկերությանը խնդրել է, ծանուցումը ստանալու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները և շտկված փաստաթղթերը ուղարկել a.bazejan@atdf.am հասցեին:

Սակայն Ծանուցմամբ մանրամասն չի նկարագրվել թե 2019 թվականի նոյեմբերի 4-ին Ընկերության ուղարկած փաստաթղթերում ինչը չի համապատասխանում Ընթացակարգի հրավերով սահմանված «Մասանգիտկան փորձառություն» որակավորման չափանիշի պահանջներին:

Ընկերությունը սահմանված ժամկետում՝ 09.11.2019թ. - 11.11.2019թ., Մրցույթի գնահատող հանձնաժողովին է ներկայացրել (էլեկտրոնային փոստի հասցեին՝ a.bazejan@atdf.am, ուղարկելու միջոցով) հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող լրացուցիչ փաստաթղթեր, այդ կերպ փորձելով շտկել Ծանուցմամբ արձանագրված որակավորումը հիմնավորող փաստաթղթերում տեղ գտած ենթադրյալ անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 2019 թվականի նոյեմբերի 15-ի ժամը 12:00-ին կայացած նիստի ժամանակ Ընկերության որակավորումը հիմնավորող փաստաթղթերը

գնահատել է անբավարար և մերժել է «Վանդ-ԳԱՍՍ» ՍՊԸ-ի հայտը, տվյալ նիստի վերաբերյալ կազմվել է Ընթացակարգի թիվ 3 արձանագրությունը: Սակայն թիվ 3 արձանագրությամբ մանրամասն չի նկարագրվել, թե Ընկերության ներկայացրած որակավորումը հիմնավորող փաստաթղթերում ինչը չի համապատասխանում Ընթացակարգի հրավերի պահանջներին:

15.11.2019թ.-ին տեղեկագրում (www.gnumner.am) հրապարակված Ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության և 03.12.2019թ.-ին տեղեկագրում (www.gnumner.am) հրապարակված կնքված պայմանագրի մասին հայտարարության համաձայն, Ընկերության հայտը մերժվել է «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը անբավարար գնահատելու հիմքով:

Ընկերությունը վկայակոչել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 3-րդ մասը, 30-րդ հոդվածի 1-ին մասը, Ընթացակարգի հրավերի 2.4 կետի 1-ին ենթակետը, 2.5 կետի 1-ին ենթակետի ա, բ և գ պարբերությունները:

Վերը նշված դրույթների համաձայն՝ մասնակիցը գնման ընթացակարգին մասնակցելու հայտը ներկայացնում է գնման ընթացակարգի հրավերով սահմանված կարգով: Գնման ընթացակարգի հրավերով սահմանվում են որակավորման չափանիշներ որոնց պետք է համապատասխանի գնման ընթացակարգին մասնակցելու հայտ ներկայացրած անձը՝ մասնակիցը:

Մրցույթի հրավերով ի թիվս այլ որակավորման չափանիշների սահմանվել է «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշ:

«Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշին համապատասխանող ճանաչվելու համար, մասնակիցը Ընթացակարգին մասնակցելու հայտը ներկայացնելու տարում և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պետք է պատշաճ կատարած լինի Ընթացակարգով գնման առարկա հանդիսացող աշխատանքին նմանատիպ աշխատանքներ, և այդ աշխատանքների գինը պետք է պակաս չլինի Ընթացակարգին մասնակցելու նպատակով, մասնակցի հայտով ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից:

Իսկ նմանատիպ աշխատանքների պատշաճ կատարման փաստը հաստատելու համար մասնակիցը Պատվիրատուին՝ պատվիրատուի գնահատող հանձնաժողովին, պետք է ներկայացնի տվյալ աշխատանքների կատարման շրջանակներում իր հետ կնքված

պայմանագիրը և այդ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող փաստաթուղթ: Ընդ որում, նմանատիպ աշխատանքների կատարման պայմանագիրը և դրա կատարումը հավաստող փաստաթուղթը մասնակիցը ներկայացնում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում:

Այսպիսով՝ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի առկայությունը հիմնավորելու համար Պատվիրատուին՝ պատվիրատուի գնահատող հանձնաժողովին, Ընկերությունը պետք է ներկայացներ նվազագույնը 6650000 (վեց միլիոն վեց հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամի չափով նմանատիպ աշխատանքների կատարված պայմանագիր և այդ պայմանագրի պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթուղթ: Քանի որ Ընկերությունն Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի համար հայտով ներկայացրել էր 13300000 (տասներեք միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամի չափով գնային առաջարկ:

Եվ եթե Ընկերությունը Պատվիրատուին ներկայացնի 6 650 000 (վեց միլիոն վեց հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամի չափով նմանատիպ աշխատանքների կատարված պայմանագիր և այդ պայմանագրի պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթուղթ, ապա Ընկերության «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը Պատվիրատուն պետք է գնահատի բավարար:

Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը գնահատելու համար Ընթացակարգի հրավերի 2.5 կետի 1-ին ենթակետի ա.պարբերությամբ սահմանվել է որ «Չափաբաժին 2. սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում նմանատիպ են համարվում. Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում՝ հիդրոտեխնիկական (նվազագույնը՝ 80%), բնակելի, հասարակական և արտադրական և էներգետիկ լիցենզիաների ներքո աշխատանքների կատարված լինելը (շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները:»:

Ըստ վերը նշված դրույթների, մասնակցի նախկինում կատարված աշխատանքների պայմանագրերը պետք է կատարված լինեն հիդրոտեխնիկական, բնակելի, հասարակական և արտադրական և էներգետիկ լիցենզիաների ներքո, որպեսզի

Ընթացակարգի շրջանակներում «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի (հետայսու նաև՝ Որակավորման չափանիշ) մասով համարվեն նմանատիպ:

Ընդ որում, հիդրոտեխնիկական լիցենզիայի ներքո կատարված աշխատանքների մասով սահմանված է առանձնահատկություն, համաձայն որի նմանատիպ համարվելու համար այդ աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է լինի մասնակցի ներկայացրած գնային առաջարկի 40 տոկոսից ոչ պակաս (հիդրոտեխնիկական լիցենզիայի ներքո կատարված աշխատանք = գնային առաջարկ*50%*80%): Հետևաբար եթե այդ աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ լինի գնային առաջարկի 40 տոկոսից ավելի, օրինակ՝ 50 տոկոս կամ 50 տոկոսից էլ ավելի, ապա այն Ընթացակարգի հրավերի պահանջներին համաձայն նույնպես պետք է գնահատվի որպես նմանատիպ:

Իսկ ինչպես սահմանված է հրավերի 2.5 կետի դրույթներով, եթե մասնակիցը Որակավորման չափանիշը հիմնավորելու համար ներկայացնում է իր ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսի չափով նախկինում կատարված աշխատանքների նմանատիպ պայմանագիր և այդ պայմանագրի պատշաճ կատարումը հիմնավորող փաստաթղթեր ապա մասնակցի «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը գնահատվում է բավարար:

Վերոգրյալից կարելի է գալ այն եզրահանգման, որ եթե Ընկերությունը «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորելու համար Ընթացակարգի հրավերի շրջանակներում Պատվիրատուին ներկայացնում է իր գնային առաջարկի հիսուն տոկոսից ոչ պակաս չափով հիդրոտեխնիակական լիցենզիայի ներքո կատարված աշխատանքների պայմանագիր և այդ պայմանագրի պատշաճ կատարումը հիմնավորող փաստաթղթեր, ապա Պատվիրատուն Ընկերության «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը պարտավոր է գնահատել բավարար:

Ինչպես երևում է սույն գործի փաստերից Ընկերությունը «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի առկայությունը հիմնավորելու համար 2019 թվականի նոյեմբերի 4-ին Պատվիրատուին է ներկայացրել հիդրոտեխնիկական աշխատանքների կատարման երկու պայմանագիր և այդ պայմանագրերի պատշաճ կատարումը հիմնավորող փաստաթղթերը, մասնավորապես՝

1) 2017 թվականի ապրիլի 05-ին կնքված թիվ 05/04 խորքային հորի հորատման աշխատանքների կատարման կապալային պայմանագիրը, որի գինը կազմել է 16869999 (տասնվեց միլիոն ութ հարյուր վաթսունինը հազար ինը հարյուր իննսունինը) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրին կից նաև Ընկերությունը ներկայացրել է տվյալ պայմագարի կատարողական ակտերը և հարկային հաշիվները:

2) 2015 սեպտեմբերի 01-ին կնքված թիվ 02 խարքային հորի հորատման աշխատանքների կատարման կապալային պայմանագիրը, որի շրջանակներում «Վանդ-ԳԱՍՍ» ՍՊԸ-ն մինչև 2018 թվականի դեկտեմբեր 04-ն կատարել է խորքային հորի հորատման աշխատանքներ: Պայմանագրի գինը կազմել է 21855600 (քսանմեկ միլիոն ութ հարյուր հիսունհինգ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրին կից Ընկերությունը նաև ներկայացրել է տվյալ պայմանագրի հարկային հաշիվները և պայմանագրով պատվիրատուի կողմից տրված տեղեկանք այն մասին, որ «Վանդ-ԳԱՍՍ» ՍՊԸ-ն տվյալ պայմանագրով կատարման ենթակա աշխատանքները կատարել է պատշաճ և ժամանակին:

Ինչպես երևում է վերոգրյալից, Ընթացակարգի հրավերով սահմանված Որակավորման չափանիշի առկայությունը հիմնավորելու համար, Ընկերությունը դեռ 2019 թվականի նոյեմբերի 4-ին Պատվիրատուին ներկայացրել է հիդրոտեխնիկական լիցենզիայի ներքո կատարված աշխատանքների պայմանագրեր և այդ պայմանագրերի պատշաճ կատարումը հիմնավորող փաստաթղթերը: Եվ այդ աշխատանքների գինը ակնհայտ գերազանցում է Ընթացակարգի շրջանակներում Ընկերության ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսի չափը:

Ընկերությունն ունի Ընթացակարգի հրավերով սահմանված «Մասնագիտական փորձառություն», Ընկերությունը չի խախտել հրավերով ստանձնած պարտավորություն և Պատվիրատուի մոտ բացակայում էր Ընկերության «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը անբավարար գնահատելու իրավական հիմքերը:

Բացի դրանից Պատվիրատուն ոչ իր կազմած արձանագրություններում, ոչ էլ Ծանուցմամբ հստակ չի նշել, թե «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի առկայությունը հիմնավորելու համար Ընկերության ներկայացրած փաստաթղթերում ինչը չի համապատասխանում Ընթացակարգի հրավերի պահանջներին, այդ կերպ զրկելով Ընկերությանը դրսևորել համապատասխան վարքագիծ և շտկել իր

ներկայացրած Որակավորման չափանիշի առկայությունը հիմնավորող փաստաթղթերում իրականում առկա անհամապատասխանությունները, եթե այդպիսիք եղել են:

Հիմք ընդունելով վերոնշյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի և 50-րդ հոդվածի պահանջներով՝ Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է ամբողջությամբ մերժել ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից «Վանդ-ԳԱՍՍ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը:

«Վանդ-ԳԱՍՍ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/193 ընթացակարգի շրջանակներում 16.01.2020թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 27.11.2019թ. թիվ Ե/01/485-19 գրությամբ հայտնել է, որ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից 2019 թվականի հոկտեմբերի 1-ին հրապարակվել է «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/103/104» ծածկագրով ընթացակարգի հրավերը, որի հայտերի բացումը տեղի է ունեցել 2019 թվականի հոկտեմբերի 8-ին: Հայտերի բացման նիստի արդյունքում ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով 2-րդ տեղ է զբաղեցրել «Վանդ-ԳԱՍՍ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից «Բայազ Էներգոշին» ՍՊԸ-ի հայտը մերժելուց հետո որակավորման փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվել ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից «Վանդ-ԳԱՍՍ» ՍՊԸ-ին, որի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են որակավորման փաստաթղթերը: Սակայն, «Մասնագիտական փորձառություն» չափանիշի մասով ներկայացված պայմանագրերը ևս գնահատվել են հրավերով սահմանված պահանջներին ոչ համապատասխան, և «Վանդ-ԳԱՍՍ» ՍՊԸ-ին տրվել է 3

աշխատանքային օր անհամապատասխանությունը շտկելու համար: Սահմանված ժամկետում ներկայացվել են նոր փաստաթղթեր, որոնք ևս չեն բավարարել հրավերով սահմանված պահանջներին. «Վանդ-ԳԱՍՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատվել է անբավարար և մերժվել: Ընթացակարգը 2-րդ չափաբաժնի մասով հայտարարվել է չկայացած:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/193 ընթացակարգի շրջանակներում 16.01.2020թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/193 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/193 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/103/104» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Վանդ-ԳԱՍՍ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.11.2019թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Վանդ-ԳԱՍՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը գնահատվել են անբավարար և Ընկերության հայտը մերժվել է:

5. <u>ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 02.12.2019թ. թիվ 26/26-1/19965-2019 գրությունը, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի 27.11.2019թ. թիվ

Ե/01/485-19 գրությունը և կից փաստաթղթերը, «Վանդ-ԳԱՍՍ» ՍՊԸ-ի դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած

մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում՝ բացառությամբ մասնակցի կողմից գնային առաջարկի և հայտի ապահովման ներկայացման դեպքերի:

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ:

Կարգի 46-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է սույն կարգի 32-րդ կետի 22-րդ ենթակետով սահմանված ժամկետներում: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման

դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում, եթե անհամապատասխանությունն արձանագրվել է կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում, ապա սույն կետում նշված ծանուցմանը կցվում է նաև այդ տեղեկատվությունը պարունակող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 61-րդ կետի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնի հայտարարություն այն մասին, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր, պայմանով, որ գնահատող հանձնաժողովը կարող է սույն կետի 2-րդ ենթակետի հիման վրա ներկայացված պայմանագրի (համաձայնագրերի, պայմանագրերի) կատարված լինելու իսկությունը ստուգել կոմիտեի միջոցով: Նախկինում կատարված պայմանագիրը (պայմանագրերը) գնահատվում է (գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն, իսկ ճանապարհաշինարարական աշխատանքների դեպքում՝ յոթանասուն տոկոսից: Ընդ որում, առնվազն մեկ պայմանագրի

շրջանակում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ չպետք է պակաս լինի տվյալ գնման ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան, իսկ ճանապարհաշինարարական աշխատանքների դեպքում՝ երեսունհինգ տոկոսից.

2) առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը, որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (համաձայնագրերի, պայմանագրերի) պատճենները, իսկ դրանց պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած, պայմանագրի (համաձայնագրի)՝ սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն կամ պայմանագրով նախատեսված փաստաթուղթ) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը.

3) ....

4) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից իր կարիքների համար ՀՀ Արմավիրի մարզ Վանանդ համայնքի ոռոգման ներտնտեսային ցանցի վերանորոգում», «ՀՀ Արմավիրի մարզ Ալաշկերտի Խորքային հորի վերականգնում՝ ոռոգման նպատակով» աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/103/104» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Վանդ-ԳԱՍՍ» ՍՊԸ-ն:

Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկը կազմել է 13 300 000 ՀՀ դրամ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.11.2019թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Բայազ Էներգոշին» ՍՊԸ-ի հայտը Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով մերժելուց հետո որակավորման փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվել հաջորդ տեղը զբաղեցրած մասնակից «Վանդ-ԳԱՍՍ» ՍՊԸ-ին:

Նույն արձանագրության համաձայն՝ «Վանդ-ԳԱՍՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում արձանագրվել են անհամապատասխանություններ հրավերով

սահմանված պահանջներին, Ընկերությանը ներկայացվել է փաստաթղթերը շտկելու պահանջ: Սահմանված ժամկետում Վանդ-ԳԱՍՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են փաստաթղթերը, որոնք գնահատվել են անբավարար և Ընկերության կողմից ներկայացված հայտը գնահատվել է անբավարար և մերժվել:

Այսպիսով՝ Ընթացակարգի հրավերով 2-րդ չափաբաժնի համար նախատեսվել է հիդրոտեխնիկական, բնակելի, հասարակական և արտադրական, էներգետիկ լիցենզիայի պահանջ:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ II-ի 3-րդ կետի 3.1 ենթակետի 1-ին պարբերությամբ սահմանվել է, որ հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովի քարտուղարի՝ սույն հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով, հանձնաժողովին է ներկայացնում սույն հրավերի 3-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում են հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Նույն հրավերով սահմանվել է, որ մասնակցին ներկայացվող՝ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում կատարված աշխատանքների ծավալը գումարային

արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Ընդ որում՝ չափաբաժին 2-ի համար Ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում. քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում՝ հիդրոտեխնիկական (նվազագույնը՝ 80%), բնակելի, հասարակական և արտադրական և էներգետիկ լիցենզիաների ներքո աշխատանքների կատարված լինելը (շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները:

Ճանապարհաշինարարական աշխատանքների, ներառյալ դրանց իրականացման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման գնումների դեպքում տնտեսական գործունեության խմբերը սահմանվում են հաշվի առնելով գնման առարկայի տեսակը):

բ. սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի (համաձայնագրի) կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Այսպիսով՝ համաձայն գործում առկա նյութերի «Վանդ-ԳԱՍՍ» ՍՊԸ-ն «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորելու համար Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացրել է Ընկերության և «ԱՆՆԱ 80» ՍՊԸ-ի միջև 05.04.2017թ. կնքված 16 869 999,6 ՀՀ դրամ արժեքով խորքային հորի հորատման աշխատանքների կատարման թիվ 05/04 պայմանագիրը, Ընկերության և «Ապառաժ» ՍՊԸ-ի միջև 01.09.2015թ. կնքված խորքային հորի հորատման աշխատանքների կատարման թիվ 02 պայմանագիրը:

«Վանդ-ԳԱՍՍ» ՍՊԸ-ին ուղղված 06.11.2019թ. ծանուցմամբ հանձնաժողովի քարտուղարը հայտնել է, որ Ընկերության կողմից ուղարկված որակավորման փաստաթղթերում գնահատող հանձնաժողովի կողմից հայտնաբերվել է անհամապատասխանություն հրավերի պահանջների նկատմամբ:

Մասնավորապես, Ընկերության կողմից ներկայացված՝

1. «Տեխնիկական ռեսուրսներ» որակավորման մասով ներկայացված խորքային վիբրատորի, ձեռքի պնևմատոփիչի, օդի կոմպրեսորի, հորատող մեքենայի մասով անհրաժեշտ է ներկայացնել սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթերը և տեխնիկական անձնագրերը: Ընկերության կողմից ներկայացվել է մաքսային մարմնում ձևակերպված հայտարարագիրը:

2. «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման մասով պահանջվել է գլխավոր ինժեներ՝ ճարտարագետ-շինարարի որակմամբ, սակայն ներկայացվել է ճարտարագիտական մենեջմենթ որակավորմամբ մասնագետ:

3. «Մասնագիտական փորձառություն» չափանիշի մասով անհրաժեշտ է ներկայացնել քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում՝ հիդրոտեխնիկական (նվազագույնը՝ 80%), բնակելի, հասարակական և արտադրական և էներգետիկ լիցենզիաների ներքո կատարված աշխատանքների պայմանագիր՝ նվազագույնը 6 650 000 ՀՀ դրամ արժողությամբ:

Համաձայն գործում առկա նյութերի՝ Ընկերության կողմից որպես շտկում գնահատող հանձնաժողովին ներկայացվել է Ընկերության և Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի միջև 03.06.2019թ. կնքված պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման N ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/17 պայմանագիր, Ընկերության և «ՎԱՆԴ-ՍԱ» ՍՊԸ-ի միջև 30.10.2019թ. կնքված սերվերի վերանորոգման պայմանագիր:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.11.2019թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Վանդ-ԳԱՍՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում արձանագրվել են անհամապատասխանություններ հրավերով սահմանված պահանջներին, Ընկերությանը ներկայացվել է փաստաթղթերը շտկելու պահանջ: Սահմանված ժամկետում «Վանդ-ԳԱՍՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են փաստաթղթերը, որոնք գնահատվել են անբավարար և Ընկերության կողմից ներկայացված հայտը գնահատվել է անբավարար և մերժվել:

Արձանագրում եմ, որ «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/103/104» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու հայտարարության մեջ նշվել է, որ Ընկերության հայտը գնահատվել է անբավարար «Մասնագիտական փորձառություն» չափանիշի մասով չհամապատասխանելու հիմքով:

Այսպիսով՝ Ընթացակարգի հրավերով սահմանվել է «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի պահանջը, ինչպես նաև այն գնահատելու կարգը: Մասնավորապես 2-րդ չափաբաժնի համար Ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվել քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում՝ հիդրոտեխնիկական (նվազագույնը՝ 80%), բնակելի, հասարակական և արտադրական և էներգետիկ լիցենզիաների ներքո աշխատանքների կատարված լինելը (շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները:

«Վանդ-ԳԱՍՍ» ՍՊԸ-ի՝ որպես Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորելու համար ներկայացվել են համապատասխան պայմանագրեր, որոնցում, համաձայն Ընկերությանն ուղարկված 06.11.2019թ ծանուցման, արձանագրվել է անհամապատասխանություն: Միևնույն ժամանակ, ուսումնասիրելով Ընկերությանն ուղղված ծանուցումը, գտնում եմ, որ նշված ծանուցումը՝ անհամապատասխանությունների արձանագրման վերաբերյալ հստակ չէ և դրանում հստակ չի նկարագրվել Ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանությունը: Մասնավորապես, ծանուցման մեջ ընդամենը նշվել է, որ «Մասնագիտական փորձառություն» չափանիշի մասով անհրաժեշտ է ներկայացնել քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում՝ հիդրոտեխնիկական (նվազագույնը՝ 80%), բնակելի, հասարակական և արտադրական և էներգետիկ լիցենզիաների ներքո կատարված աշխատանքների պայմանագիր՝ նվազագույնը 6 650 000 ՀՀ դրամ արժողությամբ: Մինչդեռ չի մատնանշվել, թե Ընկերության կողմից ներկայացված պայմանագիրը որ մասով (հաշվի առնելով նաև հրավերով նախատեսված լիցենզիաների շրջանակներում կատարված աշխատանքների ծավալների տոկոսային հարաբերակցությունը) չի համապատասխանում հրավերով սահմանված նմանատիպ

համարվող աշխատանքներին, քանի որ նմանատիպությունը գնահատելու համար հաշվի է առնվում ոչ միայն աշխատանքների ոլորտը, այլև նաև պայմանագրի շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը՝ գումարային արտահայտությամբ: Իսկ տվյալ դեպքում ծանուցումից պարզ չէ, թե Ընկերության կողմից ներկայացված պայմանագիրը չի դիտարկվել որպես նմանատիպ կատարված աշխատանքների բնույթը հիմք ընդունելով (քանի որ Կարգի 65-րդ կետը սահմանում է, որ ճանապարհաշինարարական աշխատանքների՝ ներառյալ դրանց իրականացման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման, փորձաքննության և տեխնիկական հսկողության ծառայությունների գնումների դեպքում տնտեսական գործունեության խմբերը սահմանվում են՝ հաշվի առնելով գնման առարկայի տեսակը, իսկ շինարարական ծրագրերի դեպքում՝ հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները), թե դրա շրջանակներում կատարված աշխատանքների՝ հրավերով սահմանված լիցենզիաների շրջանակներում համապատասխան տոկոսային հարաբերակցությամբ իրականացված չլինելու, կամ թե Կարգի 65-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերի՝ հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

Կարգի 46-րդ կետը սահմանում է, որ նույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է սույն կարգի 32-րդ կետի 22-րդ ենթակետով սահմանված ժամկետներում: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Տվյալ դեպքում սահմանելով մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանությունները մանրամասն նկարագրելու պահանջը,

գնումների մասին ՀՀ օրենսդրությունը նպատակ է հետապնդում հնարավորություն ընձեռնել մասնակցին հնարավորինս պարզ և հասկանալի ձևով ընկալելու իր կողմից ներկայացված փաստաթղթերում առկա անհամապատասխանությունները, որոնք անհրաժեշտ է շտկել սահմանված ժամկետում:

Տվյալ դեպքում արձանագրում եմ, որ «Վանդ-ԳԱՍՍ» ՍՊԸ-ին ուղղված ծանուցման մեջ հստակ չի նկարագրվել Ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունները, այդ թվում նաև՝ նշված անհամապատասխանությունները չեն նշվել Ընկերության կողմից երկրորդ անգամ ներկայացված փաստաթղթերի կապակցությամբ և չեն մատնանշվել նաև Ընկերության հայտը մերժելիս:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ նման պայմաններում հնարավոր չէ արձանագրել «Վանդ-ԳԱՍՍ» ՍՊԸ-ի կողմից «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/103/104» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձած պարտավորության խախտման փաստը, ուստի առկա չեն Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 02.12.2019թ. թիվ 26/26-1/19965-2019 գրությամբ «ՎԱՆԴ-ԳԱՍՍ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**